ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/70, 04.05.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Հիբրիդ Սիսթեմս» և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ կոնսորցիում

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022

Գնման առարկան՝ հավատարմագրային կառավարման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի, «ԱԿՀ ԼԱԲ» ՍՊԸ և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտերը բավարար գնահատելու որոշումները,
2. ընդունել «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի, «ԱԿՀ ԼԱԲ» ՍՊԸ և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտերը մերժելու մասին որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
պարոն Լ.Օհանյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 1,
ՀՀ ֆինանսների նախարարություն

Բողոք բերող անձինք (կոնսորցիումի մասնակիցներ)՝ 1. «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
(գլխավոր տնօրեն Վ.Ծատուրյան)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան 2, 5-րդ հարկ
Հեռ: (37460) 467681
Էլ.փոստ՝ vt@sossystems.am

2. «Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ
(տնօրեն Արման Օզմանյան)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան 2, 5-րդ հարկ
Հեռ: (374\2)744344
Էլ.փոստ՝ ozmanyan@telematica.am

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ Ոստիկանության կարիքների համար երկփուլ մրցույթի միջոցով ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով հավատարմագրային կառավարման ծառայությունների ձեռքբերման նախառրակավորման ընթացակարգ

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔ
(ԳԲՔԱ-ԼՕ-2022/70 ծածկագրով բողոքի)

Հարգելի՛ պարոն Օհանյան,

Ձեր վարույթում է քննվում «Էլլիպս Ջի էյ» ՍՊԸ-ի կողմից 18.04.2022թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/70 ծածկագրով բողոքը, որով «Էլլիպս Ջի էյ» ՍՊԸ-ն պահանջում է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար հավատարմագրային կառավարման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022» ծածկագրով երկփուլ մրցույթի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովին մերժել «Հիբրիդ Սիսթեմս» և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) կողմից ներկայացված հայտը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էլլիպս Ջի էյ» ՍՊԸ-ի կողմից 18.04.2022թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/70 ծածկագրով բողոքով բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում

կարող էր խախտվել Կոնսորցիումի շահերը, ուստի Կոնսորցիումի մասնակիցներ վերոհիշյալ ընկերությունները տվյալ բողոքների քննությանը ներգրավվել են որպես 3-րդ անձ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը,** հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով, ուսումնասիրելով «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի, «ԱԿՀ ԼԱԲ» և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ-ների կոնսորցիումի ներկայացված հայտերը և շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը, գտնում ենք, որ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի, «ԱԿՀ ԼԱԲ» և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ-ների (կոնսորցիում) չպետք է բավարար գնահատվեին գնահատող հանձնաժողովի կողմից և ենթակա էին մերժման հետևյալ հիմավորմամբ.

<u>«Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ և «ԱՀԿ Լաբ» ՍՊԸ կոնսորցիում</u>

1. «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ և «ԱՀԿ Լաբ» ՍՊԸ կոնսորցիումը չի ներկայացրել Հավելված 2-ում պահանջվող տեխնիկական միջոցների մասին տեղեկատվություն:

2. «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ և «ԱՀԿ Լաբ» ՍՊԸ կոնսորցիումը չի ներկայացրել Նախաորակավորման ընթացակարգի հայտարարությամբ սահմանված պահանջների 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված

լիցենզիաները՝ **Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության լիցենզիա, հեռահաղորդակցության ցանցերի և ենթակառուցվածքների շինարարության իրականացման համար անհրաժեշտ լիցենզիաներ և թույլտվություններ,** ընդամենը ներկայացրել է գրություն ՀՀ քաղաքաշինական կոմիտեի նախագահի տեղակալի անունից լիցենզավորման գործընթացի վերաբերյալ, որում նշվում է, որ իրենց հայտը քննարկվել է լիցենզավորող հանձնաժողովի կողմից և հայտը բավարարվել է, այնուհետև նույն գրության մեջ նշվում է, որ լիցենզավորման գործընթացի ավարտից հետո լիցենզիաների և ներդիրների ստացման մասին լրացուցիչ կտեղեկացվի: Նշված գրությունը չի կարող փոխարինել լիցենզիային, քանի որ ներկայացվածը լիցենզավորող հանձնաժողովի որոշումը չէ լիցենզիա տալու մասին, որևէ հղում չկա լիցենզավորող հանձնաժողովի լիցենզիա տալու մասին որոշմանը, բացի այդ՝ գրության մեջ նշվում է, որ լիցենզավորման գործընթացը չի ավարտվել: Փաստորեն, այդ գրությունը ընդամենը տեղեկատվություն է լիցենզավորման գործընթացի վերաբերյալ: Հայտարարության մեջ հստակ նշված է, որ պահանջվում է լիցենզիայի առկայություն, ոչ թե նման լիցենզիա ստանալու հնարավորություն ապագայում, ինչպես օրինակ նման պահանջ կա Հայտարարարության 9-րդ կետով սահմանված ISO միջազգային ստանդարտի հավաստագրի համար: Հայտերի բացումը և Գնահատող հանձնաժողովի նիստը կայացել են 2022 թվականի փետրվարի 2-ին. Մինչդեռ հետագայում, շտկման փուլում ներկայացված լիցենզիան տրամադրվել է փետրվարի 4-ին, ինչը ևս հավաստում է, որ հայտը ներկայացնելու պահի դրությամբ պահանջվող լիցենզիան առկա չի եղել:

3. Թեև «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ և «ԱՀԿ Լաբ» ՍՊԸ կոնսորցիումի անդամներից ոչ մեկը չի ունեցել լիցենզիա, ներկայացվել են հեռահաղորդակցության ցանցի կառուցման պայմանագիր (27 սեպտեմբերի 2021 թվականի պայմանագիր «ԱՀԿ Լաբ» ՍՊԸի և «Էլլիպս ՋԻԷՅ» ՍՊԸ-ի միջև), ցանցի նախագծման պայմանագիր (15 հունիսի 2021 թվականի "Մատրիքս" ՍՊԸ-ի և "Սմարտ Բիլդինգ" ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը): Այստեղից հետևում է, որ կոնսորցիումի մասնակիցները կամ առանց լիցենզիայի զբաղվել են լիցենզավորման ենթակա գործունեությամբ, կամ նշված պայմանագրերն ու կատարողական ակտերը կեղծ կամ շինծու են, հետևաբար չեն կարող դիտարկվել որպես մասնակցի փորձը հիմնավորող փաստաթղթեր:

4. Ներկայացված չեն սերվերների, տեսապատերի մատակարարման աշխատանքների կատարման պամանագրեր, ինչի հետևանքով մասամբ չեն բավարարում Ընթացակարգի հայտարարության 5-րդ կետի պահանջներին: Ներկայացված պայմանագրերը վերաբերում են համակարգիչների մատակարարմանը, ոչ թե սերվերի, իսկ ներկայացված մոնիտորների մատակարարումը չի կարող համարվել տեսապատի մատակարարում:

5. Աշխատակիցների համապատասխան ուսուցում կամ վերապատրաստում անցած լինելու մասին հավաստագրերի վրա առկա չէ հավաստագիր տրամադրողի ստորագրություն:

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ

1. Չնայած որ գնահատող հանձնաժողովը շտկման փուլում պահանջել էր ներկայացնել տրամադրված պայմանագրերի կատարողական ակտերը, սակայն ոչ բոլոր պայմանագրերի կատարողական ակտերն են ներկայացված:

2. Ներկայացրել է «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ-ի հետ 2011 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված պայմանագիր, որի գործողության ժամկետը նշված չէ, կատարողական ակտեր էլ չկան ներկայացված, հետևաբար չենք կարող հավաստիանալ, որ դա վերջին հինգ տարվա ընթացքում կատարված աշխատանք է:

3. Աշխատակիցների վերապատրաստում անցնելու մասին բոլոր հավաստագրերը տրված են նույն ընկերության կողմից նույն ամսաթվին և այդ հավաստագրերի վրա չկա տրամադրողի ստորագրությունը, ինչը կասկածի տակ է դնում այդ հավաստագրերի հավաստիությունը:

«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ և «ԱՀԿ Լաբ» ՍՊԸ կոնսորցիումի փոխկապակցվածության մասով. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:*

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ *գնման ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) արգելվում է սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:*

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 119-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Կան հիմնավոր կասկածներ «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի և «Սմարտ Բիլդինգ» և «ԱՀԿ Լաբ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի փոխկապակցվածության մասով. «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ-ն ունեն ընդհանուր աշխատակիցներ՝ համատեղության կարգով աշխատող, ինչի մասին տեղեկացանք՝ ծանոթանալով այդ երկու մասնակիցների հայտերում առկա փաստաթղթերին: Որպես իրենց աշխատակիցների համապատասխան վերապատրաստում անցած լինելը և որակավորում ունենալը հավաստող փաստաթղթեր այդ երկու ընկերությունները ներկայացրել են նույն ամսաթվով և նույն արաբական ընկերության կողմից տրված հավաստագրեր, որոնց վրա ոչ միայն չկա ստորագրություն, այլև

նույն ընկերության կնիքը տարբեր հավաստագրերի վրա տարբեր չափեր ունի, ինչը ոչ միայն կասկածի տակ է դնում այդ հավաստագրերի իսկությունը, այլև հիմք է տալիս ենթադրելու, որ այդ երկու ընկերությունները գործում են համաձայնեցված: Նման ենթադրություն անելու առիթ է տալիս նաև այն փաստը, որ Գնահատող հանձնաժողովի որոշումների բողոքարկման ընթացքում «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն և «Սմարտ Բիլդինգ» և «ԱՀԿ Լաբ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը միջնորդել են ծանոթանալ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերին, իսկ միմյանց հայտերին ծանոթանալու և նման միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտություն չեն զգացել: "ԱՀԿ Լաբ" ՍՊԸ-ի և «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիր է ներկայացվել որպես փորձը հիմնավորող փաստաթուղթ, որի գործողության ժամկետի ավարտը նշված է 2022 թվականի փետրվարի 1-ը: Տպավորություն է ստեղծվում, որ նշված պայմանագիրը կազմվել է բոլորովին վերջերս սույն Ընթացակարգին «Սմարտ Բիլդինգ» և «ԱՀԿ Լաբ» ՍՊԸ կոնսորցիումի մասնակցությունը ապահովելու նպատակով: Հիշեցնենք, որ ՀՀ Քննչական կոմիտեն դեռևս 2019թ. հաղորդագրություն էր տարածել, ըստ որի՝ պարզվել էր, որ «Էլլիպս Ջի էյ» ՍՊ ընկերությունը հիմնադրվել և փաստացի ղեկավարվում է «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության համահիմնադիրների կողմից: «Սմարտ Բիլդինգ» և «ԱԿՀ Լաբ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի ներկայացուցիչ փաստաբան Արկադյա Գևորգյանը ևս առնչություն ունի «Սեքյուրիթի Դրիմ» ընկերության հիմնադիրների հետ: Նա զբաղվել է «Սեքյուրիթի Դրիմ» ընկերության հիմնադիրների պաշտպանությամբ, իսկ «Էլլիպս Ջի էյ» ՍՊ ընկերության հետ առնչություն ունեցող քրեական գործով ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Գրիգորյանը աշխատում է նաև «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերությունում ընկերության անձնակազմի կառավարման բաժնում: Նման տեղեկություններ կան նաև մամուլի մի շարք հրապարակումներում: Ներկայացված բոլոր փաստերը վկայում են, որ այդ երկու մասնակիցները գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից: Վստահ ենք կլինեն այդ երկու մասնակիցների փոխկապակցվածությունը ապացուցող մի շարք այլ ծանրակշիռ փաստեր, որոնք բաց աղբյուրներում չկան և մենք չենք կարող դրանց մասին տեղեկանալ, այդ իսկ պատճառով միջնորդում ենք ձեռնարկել միջոցներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով այդ երկու մասնակիցների ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով փոխկապակցվածությունը ստուգելու և փոխկապակցված ճանաչելու համար: Դա լրջագույն հանգամանք է, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն արգելվում է փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

Այդ երկու մասնակիցների փոխկապակցվածության և ներկայացված հավաստագրերի իսկությանը վերաբերող մեր կասկածները ներկայացվել են նաև նախորդ բողոքի ընթացքում, ինչպես նաև ՀՀ

ոստիկանությանը, սակայն մեզ համար անհասկանալի պատճառներով ՀՀ ոստիկանությունը որևէ միջոց ձեռք չի առել նշված հանգամանքները պարզելու համար:

Վերը շարադրվածը վկայում է, որ ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար հավատարմագրային կառավարման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022» ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովը բավարար գնահատելով «Էլլիպս Ջի էյ» ՍՊԸ-ի, «ԱԿՀ ԼԱԲ» և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ-ների (կոնսորցիում) կողմից ներկայացրած հայտերը՝ գործել է ոչ իրավաչափ և խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42 կետի պահանջները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1. **Պարտավորեցնել «ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022» ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Էլլիպս Ջի էյ» ՍՊԸ-ի, «ԱԿՀ ԼԱԲ» և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ-ների (կոնսորցիում) կողմից ներկայացրած հայտերը բավարար գնահատելու մասին որոշումները:**

2. **Պարտավորեցնել «ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022» ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Էլլիպս Ջի էյ» ՍՊԸ-ի, «ԱԿՀ ԼԱԲ» և «Սմարտ Բիլդինգ» ՍՊԸ-ների (կոնսորցիում) կողմից ներկայացրած հայտերը մերժելու վերաբերյալ:**

Կից ներկայացվում է՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:

2. «Հիբրիդ Սիսթեմս» և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊ ընկերությունների տնօրենների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

3. ՀՀ քաղաքաշինական կոմիտեի նախագահի տեղակալի գրությունը

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝

«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն՝ *Վահագ Ծատուրյան*

«Հիբրիդ Սիսթեմս» ՍՊԸ-ի տնօրեն՝ *Արման Օգմանյան*